# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք, ՀՀ
Արարատի մարզ, գ. Այգեզարդ, Հեռ. (0235)61077 ,
aygezard ararat@mta gov am

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

N 167
*22 դեկտեմբեր 2017թ.*

Ներկայացվում է Այգեզարդ համայնքի 15.12.2017 թվականի ավագանու նիստի թիվ

27,28,29-Ն,30, 31-Ն,32-Ն,33-Ն որոշումները

առդիր 15 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

<>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2017 թվականի N 27

ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգեզարդ համայնքի ավագանու նիստի օրակարգի հետևյալ հարցերը՝

1.ԱՅԳԵԶԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԵՂԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ: 2.ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

3.ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

4.ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ և ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5.ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

6.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0036-003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ 80ՔՄ ՏԱՐԱԾՔ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

| | Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Չի մասնակցել |
|---|---|---|---|---|
| ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ | ● | | | |
| ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ | ● | | | |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ | ● | | | |
| ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ | ● | | | |
| ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ● | | | |
| ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ | ● | | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ | ● | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 28

## ԱՅԳԵԶԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԵՂԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

Հաստատել Այգեզարդի համայնքապետարանի հաշվեկշռում եղած օբյեկտների տարեվերջյան գույքագրման արդյունքները` համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 29-Ն

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 13-14-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Այգեզարդ համայնքում 2018թվականին սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել.

Հիմնական օբյեկտների համար

ա)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում `այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բա)200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30 000դրամ.

բբ)500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000դրամ.

բզ)1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000դրամ.

բղ)3000-ից ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100 000դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3 000դրամ.

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5 000դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների ,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանած շինության թույլտվություն չպահանջող դեպքերի ) համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով ՝ չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 3 000դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5 000դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 200 000դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 60 000դրամ:

6. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝յուրաքանչյուր եռամսյակի համար

ա)Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10 000 դրամ,

բ)26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 11 000 դրամ,

գ)50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13 100 դրամ,

դ)100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20 100 դրամ,

ե)200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող

հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.100 դրամ,

զ)500և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45.100դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`յուրաքանչյուր եռամսյակի համար`

ա) Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող դեպքում 10 000 դրամ,

բ)26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 11 000 դրամ,

գ)50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական

և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13 100 դրամ,

դ)100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20 100 դրամ,

ե)200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.100 դրամ,

զ)500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45.100 դրամ:

7.Համայնքի տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար`յուրաքանչյուր օրվա համար` 1քմ-ի համար`350 դրամ:

8.Համայնքի վարչական տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին(սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար` օրացույցային տարվա համար`

ա.Առևտրի օբյեկտների համար` 5 000դրամ

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 25 000դրամ

գ.բաղնիքների (սաունաների) համար` 200 000դրամ

դ.խաղատների համար՝ 500 000դրամ

ե.շահումով խաղերի համար՝ 250 000դրամ

զ.վիճակախաղերի համար՝ 100 000դրամ:

9.Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինություններում՝

- Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1. 000դրամ,

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 5.100դրամ,

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.100դրամ,

-100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 15.100դրամ,

-200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 20.100դրամ,

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 30.100դրամ,

բ.Ոչ հիմնական շինություններում՝

- Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500դրամ,

-26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1. 100դրամ,

-50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.100դրամ,

-100-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 4.100դրամ,

-200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 8.100դրամ,

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցողհանրային սննդի օբյեկտի համար՝ 15.100դրամ,

10.ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս1քմ տեղական տուրքը սահմանել .

ա)ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս ) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000դրամ,

բ) Թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս ), արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3500դրամ

գ)այլ արտաքին գովազդի համար 1 500դրամ:

դ)Սոցիալական գովազդի համար 0դրամ:

ե)Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 375դրամ:

զ)Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով՝ 150դրամ:

11.Համայնքի խորհրդանիշը (անվանում), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000դրամ,

12..Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 դրամ:

13.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 500 000 դրամ:

Սույն որոշման 1-ին ,2-րդ և 3-րդ կետով սահմանված դրույքաչափերը համայնքում հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ,4-14րդ կետով սահմանված դրույքաչափերը 0.3գործակցի կիրառմամբ:

15.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանները մշակելու և հաստատելու շինության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000դրամ :

16.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում՝ անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար Տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000դրամ :

17.Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից , մրցույթներ , աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 2000դրամ:

18.Այգեզարդ համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր շնչին ամսեկան 50 դրամ:

18.1 Համայնքի առևտրի ,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան 20 դրամ:

18.2Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ-ի համար ամսեկան 4դրամ:

18.3Կրթական ,մշակութային առողջապահական սպորտային շինությունների 1քմ-ի համար ամսեկան 3դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 30

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողիհարկիարտոնություններիմասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքիպահանջներովև հիմքընդունելով համայնքի միշարքբնակիչներիդիմումները, այն,որ փոխելենիրենցսեփականաշնորհվածհողերիհողատեսքերը, հիմնելեննորատունկայգիներ.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Համայնքի նորատունկ այգիներ հիմնած բնակիչներին ազատել հողի հարկից՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Այգեզարդ համայնքի ավագանու
2017թվականի դեկտեմբերի 15-ի
թիվ 30որոշման

| NN | Անուն Ազգանուն | նախկին հողատեսքը | | | հիմնել է | | | Ծածկագիր |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | խաղող (հա) | կորիզավոր (հա) | վարելահող (հա) | խաղող (հա) | հնդավոր (հա) | կորիզավոր (հա) | |
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Տիգրան Պետիկի Աբրահամյան | | 0.38 | | | 0.38 | | 03-009-0104-0001 |
| 2. | Հովիկ Նորիկի Հովակիմյան | 0.08 | | | 0.08 | | | 03-009-0214-0004 |
| | | 0.13 | | | 0.13 | | | 03-009-0215-0005 |
| | | 0.156 | | | 0.156 | | | 03-009-0215-0004 |
| 3. | Դրաստամատ Գարեգինի Քոչարյան | | 0.33 | | | | 0.33 | 03-009-0101-0008 |
| | | | | 0.13 | 0.13 | | | 03-009-0122-0002 |
| | | | | 0.08 | | | 0.08 | 03-009-0123-0002 |
| 4. | Հրաչյա Արտոյմի Ավագյան | | | 4.9954 | 0.3 | | 1.994 | 03-009-0303-0003 |
| 5. | Պետիկ Բագրատի Մարգարյան | 0.29 | | | 0.29 | | | 03-009-0133-0009 |
| 6. | Բաբկեն Բենիկի Աղամյան | 0.15 | 0.15 | | 0.15 | | 0.15 | 03-009-0133-0009 |
| 7. | Ժորա Անդրանիկի Բարսեղյան | | 0.36 | | | | 0.36 | 03-009-0184-0007 |

Աշխատակազմի քարտուղար Հ.Աբրահամյան

Գյուղ գծով մասնագետ Ա.Արշակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 31-Ն

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ և ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Այգեզարդի մանկապարտեզի ծնողական գումարի չափ սահմանել ամսեկան 3000դրամ:

Արվեստի դպրոց հաճախող երեխաների վարձավճարի չափ սահմանել 2500դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32-Ն

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Այգեզարդ համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի եկամտային մասի 9000415156117 հաշվին ավելացնել 1.252.500/մեկ միլիոն երկուհարյուր հիսուներկու հազար հինգհարյուր /դրամ որպես հողի օտարումից ստացված եկամուտ:

2.ֆոնդայինբյուջեի ծախսային մասի 04.05.01.58 ծրագրի 900412156458 հաշվի 5134 հոդվածին ավելացնել 40,0/քառասուն հազար / դրամ՝ նախագծային աշխատանքների կատարման համար:

3. .ֆոնդայինբյուջեի ծախսային մասի 06.04.01.52 ծրագրի900412156094 հաշվի 5134 հոդվածին ավելացնել 40000/քառասուն հազար/դրամ՝ նախագծային աշխատանքների կատարման համար:

4. ֆոնդային բյուջեի ծախսային մասի 04.05.01.58 ծրագրի 900412156458 հաշվի 5113 հոդվածին ավելացնել 1172.5/մեկ միլիոն հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր/դրամ ՝մայրուղիների և փողոցների վերակառուցման և վերանորոգման համար:

5.Վարչական բյուջեի 11.01.02.51 ծրագրի 900412156139 հաշվի 4891 հոդվածից պակասեցնել

300000/երեք հարյուր հազար/ դրամ, որը ավելացնել վարչական բյուջեի10.07.01.54 ծրագրի

900412156144 հաշվի 4726 հոդվածին՝ համայնքի մահացածների ընտանիքներին հուղարկավորման համար դրամական աջակցություն տալու համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33-Ն

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0036-003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ 80ՔՄ ՏԱՐԱԾՔ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ մկ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Համայնքային սեփականությոն հանդիսացող 0036- 003 ծածկագրի տակ գտնվող ընդանուր օգտագործման հողամասից 80 քմ տարածք թույլատրել վաճառել աճուրդային կարգով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶԱՏ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ